Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀԿՏ17 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 17 Կոտայք – 2 (Աբովյան) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026-30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:33:28 AMT

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.
- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 27 շահառուի Կոտայքի մարզի Աբովյան համայնքում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 20 դեպքի վարում (ընտանեկան նպաստ համակարգում առցանց տարբերակով 4 վերահաշվառման կազմակերպում, 1 բժշկական հետազոտության կազմակերպում, 2 նույնականացման քարտի ձեռքբերման գործընթացի կազմակերպում, 2 կենսաթոշակի ապահովման համակարգում առցանց փաստաթղթավորման գործընթացի իրականացում, 2 եռամսյա հրատապ օգնության համակարգում առցանց տարբերակով վերահաշվառման կազմակերպում, 1 աջակցության ստացման գործընթացի կազմակերպում, 1 հաշմանդամության կարգի վերականգման գործընթացի կազմակերպում, 2 աջակցող միջոցի ձեռքբերման գործընթացի կազմակերպում, 1 անձնագրի ձեռքբերման գործընթացի կազմակերպում, 1 քաղաքացիության ձեռքբերման գործընթացի կազմակերպում, 2 անվճար տարբերակով դեղորայքի ստացման կազմակերպում, 1 գույքահարկի տեղեկանքի ձեռքբերման գործընթացի կազմակերպում):
Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 27 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում 27 տունայց է իրականացվել՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 8 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: շահառուի համար իրականացվել է գլյուկոմետրիա: 2 շահառու ուղեկցվել է բժշկական

հաստատություն՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում նյութեր չեն տեղադրվել :

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Տնային սպասարկման կենտրոնի աշխատակիցները մասնակցել են PSEAH և Sphere Standards թեմաներով հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են շահառուների պաշտպանության, էթիկական վարքագծի և ծառայությունների որակի ապահովման հետ կապված հարցեր:
- Տնային սպասարկման կենտրոնի աշխատակիցները մասնակցել են հուզական այրման (burnout) կանխարգելմանն ուղղված վերապատրաստմանը, որը կազմակերպվել է կազմակերպության կենտրոնական գրասենյակում: Վերապատրաստման շրջանակներում ներկայացվել են մասնագիտական սթրեսի կառավարման, հոգեկան բարեկեցության պահպանման և աշխատանքային արդյունավետության բարձրացման մեթոդներ:

Ձևաչափ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 27/26 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 25 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 4 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 22 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա - 2<br>Բ – 23 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 27 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 27 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 27 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | - |
| 6. | խորհրդատվական օգնություն | 27 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07.2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)